

Չարց Որո՞նք են համարվում առևտրային հաշվառքի սարքեր:

Պատասխան Առևտրային է համարվում Պայմանագրում նշված հաշվառքի սարքը: Պայմանագրում պարտադիր նշվում են հաշվիչի, ինչպես նաև հոսանքի և լարման տրանսֆորմատորների գործարանային համարները և տեխնիկական հարաչափերը: Բնակչության առևտրային հաշվառքի սարքերը (նաև բազմասակագնային հաշվիչները) ձեռք է բերում և տեղադրում է մատակարարը՝ սպառողի գրավոր դիմումի հիման վրա, ինչպես նաև իրականացնում է դրանց սպասարկումն ու շահագործումը՝ իր միջոցներով: Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը սպառողի պահանջով իրականացվում է կանխավճարի հետևյալ չափերի վճարման պայմանով.

ա) միաֆազ ինդուկցիոն հաշվիչների դեպքում՝ 10000 դրամ,

բ) միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային և եռաֆազ ինդուկցիոն հաշվիչների դեպքում՝ 20000 դրամ,

գ) եռաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչների դեպքում՝ 120000 դրամ: